

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ և ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018 Թ.
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային, կառավարման մարմինների պահպանում

Ծրագիր 01-01-01-03

Նպատակը՝

ա/ ՀՀ Կառավարության տարածքային կառավարման քաղաքականությունն իրականացնելու միջոցով նպաստել ՀՀ կառավարության կողմից դեռևս 2011թ. ընդունած ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգի իրականացմանը՝ հաշվի առնելով տարածքային զարգացման համաշխարհային մարտահրավերները և ժամանակի հրամայականները:

բ/ Մարզում պետական ծառայությունների կողմից ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, աղքատության հաղթահարման ռազմավարության և ՀՀ կառավարության 2014թ.մարտի 27-ի թիվ 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման համար պետության կողմից առավել մատչելի, որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

գ/ հասարակության յուրաքանչյուր անդամի՝ սեփական պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված լինելու անվերապահ ընկալման ամրապնդումը, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու անձնական զարգացման հնարավորությունը, մասնագիտական աճը, որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ընդլայնումը :

Մարզում գերակա խնդիր է պետական կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը և ներդրումը, պետության կողմից ընդունվող որոշումների հնարավորինս թափանցիկության, մատչելիության ապահովումը և դրանց մշակմանը մարզի բնակչությանը ակտիվ մասնակցության ապահովումը էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական համակարգերի ներդրման միջոցով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պահպանմանը տրամադրվել է 375796.28 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 97.7%-ը, շեղում կազմել է 8814.52 հազ. դրամ,որը պայմանավորված է՝

ա/ կապի ծառայությունների գծով -- 1918.02 հազ. դրամ, որը գոյացել է ապրիլ ամսից Եղեգնաձոր-Երևան ուղիղ հեռախոսակապից /2 համար/ հրաժարվելու արդյունքում:

բ/ Էներգետիկ ծառայությունների գծով – 1771.94 հազ. դրամ, որը պայմանավորված է բարենպաստ եղանակով և խնայողությամբ / ոչ աշխատանքային օրերին և ժամերին մինիմալ ջերմասպահովում/:

գ/ տրանսպորտային նյութերի գծով---3015.90 հազ. դրամի խնայողությունը պայմանավորված է նախորդ տարիներից պահեստավորված 9219լ բենզինի մնացորդի առկայությամբ/ հաշվետու տարում մնացորդը ծախսվել է ամբողջությամբ/:

դ/ անհարկի գործուղումներից խուսափելու հետևանքով գործուղման ծախսերի գծով խնայվել է 865.5 հազ. դրամ՝ միաժամանակ մարվել է նաև նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների 289.8 հազ. դրամ պարտքը:

Մնացած հոդվածներով տնտեսվել է 1243.17 հազ. դրամ, որը հիմնականում պայմանավորված է գնումների կազմակերպման գործընթացում առավել հետևողականության արդյունքում ձեռք բերված ապրանքների գնի և առաջարկի տարբերությունից:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել է 374938.52 հազ. դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը աճել են 0.2%-ով կամ 857.76 հազ.դրամ դրամով՝ հիմնականում պայմանավորված է աշխատակիցների աշխատավարձի սանդղակին համապատասխան գործակիցների բարձրացման հետ կապված աշխատավարձի ֆոնդի բնականոն աճի և մեկ հաստիային միավորի ավելացման հետ:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին.

Ծրագիր 01-08-01-02

ՀՀ կառավարության թիվ 212-Ն որոշմամբ 01.03.2018թ ՀՀ Վայոց ձորի մարզի սահմանամերձ համայնքներին բնական գազի, էլեկտրաէներգիայի, գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու համար նախատեսվել է 33899.9 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 27124.44 հազ. դրամ: Շեղումը կազմում է 6775.46 հազ.դրամ:

Ֆինանսավորումն իրականացվել է համայնքների կողմից ներկայացվող հայտերի և յուրաքանչյուր ամիս «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրվող փոխհատուցվող էլ. էներգիայի ծախսի հաշվարկային տվյալների հիման վրա:

2018թ. դեկտեմբեր ամսվա էլ. էներգիայի ծախսերը հունվար ամսին գույքագրվելու պատճառով չի ֆինանսավորվել, փոխարենը ֆինանսավորվել է 2017 թ. դեկտեմբերի ծախսերը:

ՀՀ կառավարության որոշմամբ փոխհատուցվել են 5 սահմանամերձ բնակավայրեր:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել է 29172.8 հազ. դրամ: 2017 թվականի համեմատ դրամարկղային ծախսը նվազել է 2048.36 հազ. դրամ պայմանավորված է սոցիալական աջակցությունից օգտվողների թվաքանակի նվազման և համեմատաբար մեղմ բնակլիմայական պայմանների հետ:

2018 թվականի օգտվողների թվաքանակը կազմել է 725 շահառու , 2017 թվականի օգտվողների թվաքանակը կազմել է 766 շահառու:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում,

ընթացիկ պահպանում և շահագործում

Ծրագիր՝ 04-05-01-04

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նախատեսված հատկացումները կազմել են 100129.0 հազ. դրամ: 2018թ. դրամարկղային ծախսը կազմել էր 100129.0 հազ.դրամ կամ իրականացվել է 100%-ով:

2017 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 86025.0 հազ. դրամ: Աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 16.4%:

2018թ. փաստացի սպասարկվել են 146.3 կմ ձմեռային պահպանման ենթակա ավտոճանապարհներ և 60.86 կմ ամառային պահպանման ենթակա ավտոճանապարհներ:

2017թ. փաստացի սպասարկվել են 139.9 կմ ձմեռային պահպանման ենթակա ավտոճանապարհներ և 54.1 կմ ամառային պահպանման ենթակա ավտոճանապարհներ:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր

Ծրագիր՝ 04-09-01-01

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են -1641.95 հազ.դրամ /1224.8 քառ. մ հողամաս/: Նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է -176.0 հազ.դրամ: Մուտքերը ավելացել են 1465.95 հազ. դրամով

Մշակույթի ոլորտ

Ընթացիկ տարում մշակույթի ոլորտի հիմնական նպատակն է եղել ստեղծագործական գործունեության աջակցումն ու խթանումը, պատմական և մշակութային արժեքներ ներկայացնող թանգարանային առարկաների հավաքածուների պահպանելը, հայտնաբերելը և հավաքագրելը, ուսումնասիրելն ու հանրահռչակելը. հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը, ընդհանուր մշակութային ծառայության պահպանումը, երիտասարդ ստեղծագործողների խրախուսումը, մշակութային երկխոսությունը, տաղանդավոր երիտասարդների հայտնաբերելը և խրախուսելը:

Մարզում մշակույթի ոլորտի զարգացման գերակայություններն են.

ա/ մշակութային կյանքի զարգացում

բ/ մարզամշակութային միջոցառումների համատեքստում երիտասարդական քաղաքականության զարգացումը և նրա մասնակցության ապահովումը հոգևոր-մշակութային կյանքին:

գ/ ոչ նյութական արժեքների պահպանելը, հայտնաբերելը և հավաքագրելը:

Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ

Ծրագիր՝ 08-02-02-02

2018թ. պետական բյուջեով Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի <<Երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր են նախատեսվել գումարով՝ 13962.8 հազ.դրամ: 2018թ. Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմում է 13962.8 հազ. դրամ:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել է 14945.6 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատ ծրագրային ցուցանիշի և դրամարկղային ծախսի նվազեցումը պայմանավորված է սպասարկող անձնակազմի մեկ հաստիքի կրճատմամբ:

Թանգարանում պահպանվում են 9418 ցուցանմուշներ; 2018թ. թանգարանի այցելուների թիվը 989 է, նախորդ 1339-ի փոխարեն: Այցելուների թվի նվազումը պայմանավորված է ցուցադրությունների քանակով:

Կազմակերպվել է 5 ցուցադրություն- 2017թ.-ի 8-ի փոխարեն:

Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում

Ծրագիր՝ 08-02-03-02

ՀՀ 2018թ. պետական բյուջեով մարզի Եղեգնաձորի «Մշակույթի տուն» ՊՈԱԿ-ին նախատեսվել են ծախսեր գումարով՝ 2318.6 հազ. դրամ:

2018թ. դրամարկղային, փաստացի ծախսերը կազմել են 2318.6 հազ. դրամ:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել է 2318.6 հազ. դրամ:

Մշակութային միջոցառումների իրականացում

Ծրագիր՝ 08-02-05-04

Վայոց Ձորի մարզային մշակութային միջոցառումների իրականացման համար մարզպետարանին ՀՀ 2018թ. պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր գումարով՝ 4461.3 հազ.դրամ:

2018թ. դրամարկղային ծախսը կազմել է 4461.3 հազ. դրամ:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել է 4170.0 հազ. դրամ:

2018թ. իրականացվել են պետական բյուջեի հավելված 1-ով նախատեսված բոլոր 10 միջոցառումները, իսկ 2017թ. իրականացվել են նախատեսված 15 միջոցառումներն ավելի փոքր ծախսերով;

Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին

նվիրված միջոցառումների իրականացում,

Ծրագիր՝ 08-02-05-15

ՀՀ կառավարության 22.02.2018թ. թիվ 190-Ն որոշմամբ Վայոց ձորի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 3580.0 հազ. դրամ; Դրամարկղային ծախսը կազմել է 3580.0 հազ. դրամ՝ ապահովվելով ծրագրային ցուցանիշի 100%-ը:

Կրթություն

2018թ. կրթության ոլորտում մարզպետարանի հիմնական նպատակը ՀՀ կառավարության կողմից 2014թ. մայիսի 19-ի թիվ 511-Ա որոշմամբ Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացմամբ պայմանավորված կրթության բնագավառի գերխնդրի՝ կրթության որակի բարձրացման, ինչպես նաև միջազգային ստանդարտներին համապատասխանեցմանը նպաստելն ու օժանդակելն է, որը ներառում է՝

1. մարզի դպրոցահասակ երեխաների սահմանադրությամբ ամրագրված կրթական իրավունքի ապահովումը և պաշտպանությունը:

2. Կրթական համակարգի գործունեության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը:

3. Նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիության ապահովումը:

4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մատչելիության ապահովում:

5. Արտադպրոցական ոլորտի զարգացումը, նորացումն ու կատարելագործումը: Արտադպրոցական նոր ծրագրերի իրականացումը նպաստում է աշակերտների մոտ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների, հատկապես ռոբոտատեխնիկայի հանդեպ հետաքրքրության առաջացմանը, ճարտարագիտական մտածելակերպի զարգացմանը :

Նախադպրոցական կրթություն

ծրագիր՝ 09-01-01-01

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր գումարով 22566.2 հազ.դրամ: ՀՀ կառավարության 06.12.2018թ. թիվ 1403-Ն որոշմամբ պակասեցվել է 1983.0 հազ.դրամ, որի արդյունքում ճշտված պլանը կազմել է 20583.2 հազ. դրամ, նույնքան դրամարկղային ծախսը՝ 20583.2 հազ.դրամ:

2017 թ. դրամարկղային ծախսը կազմել է 23074.0 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատ դրամարկղային ծախսը նվազել է 2490.8 հազ. դրամով, որը պայմանավորված է աշակերտների թվի նվազման հետ /164-142/:

2018 թվականի մարզի 14 դպրոցներում նախադպրոցական կրթություն են ստացել 5-6 տարեկան 142 երեխաներ, իսկ 2017թ. 14 դպրոցներում նախադպրոցական կրթություն են ստացել 164 երեխաներ:

Հանրակրթական ուսուցում

2018թ **հանրակրթական ուսուցման** երեք ծրագրերով դրամարկղային ծախսերը կազմել է 1 611 553.4 հազ.դրամ, իսկ 2017թվականին 1 696 988.02 հազ.դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5%-ով կամ 85 434.62 **հազ.դրամով**

Չնայած այն հանգամանքի, որ դպրոցահասակ երեխաների միջին թվաքանակը ավելացել է 62-ով / 2018թ. 5541 - 2017թ. -5479/, սակայն նվազել է դասարանների թիվը /2018թ. կոմպլեկտավորվել է 438.8 դասարան, նախորդ տարվա 444.7-ի դիմաց/, կրճատվել են հաստիքներ :

Դպրոցների ֆինանսավորումը կատարվել է ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտերին համապատասխան:

Ծրագրերի իրականացման համար մանկավարժական դրույքների ընդամեն թիվը հաշվետու տարում կազմել է 627 դրույք- նախորդ տարվա 645.2 դրույքի փոխարեն: Մարզում մեկ մանկավարժին ընկնում է 6.5 աշակերտ, իսկ հանրապետական միջին ցուցանիշը կազմում է 9.4 աշակերտ:

2018թ. ուս. տարում գործել է 47 հանրակրթական դպրոց ՊՈԱԿ և 1 արտադպրոցական հիմնարկ ՊՈԱԿ:

Հանրակրթական ուսուցում ծրագրեր- տարրական ընդհանուր կրթություն

ծրագիր՝ 09-01-02-01,

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նշված ծրագրով մարզի հանրակրթական դպրոցներում տարրական ընդհանուր կրթության համար պահպանման ծախսեր են նախատեսվել 624504.1 հազ. դրամ: ՀՀ կառավարության 06.12.2018թ. թիվ 1403-Ն որոշմամբ պակասեցվել է 10172.5 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է 614331.6: 2018 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 614331.6 հազ. դրամ, ապահովվելով ծրագրի 100%-ը:

2017թ. դրամարկղային ծախսերը կազմել է 637221.9 հազ .դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.6%-ով կամ 22890.3 հազ.դրամ դրամով՝ պայմանավորված է ուսումնասօժանդակ անձնակազմի հաստիքների կրճատման հետ /դպրոցներն անցել են արտագերատեսչական պահպանության/ :

Աշակերտների փաստացի թվաքանակը **66** աշակերտով /2333 -2267/ ավելացել է , իսկ դասարանների փաստացի թվաքանակը 2017թ. համեմատությամբ 160.7-ից դարձել է 161.8:

Հանրակրթական ուսուցում ծրագրեր- հիմնական ընդհանուր կրթություն

ծրագիր՝ 09-02-01-01

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նշված ծրագրով մարզի հանրակրթական դպրոցներում հիմնական ընդհանուր կրթության համար պահպանման ծախսեր են նախատեսվել 750998.6 հազ. դրամ: ՀՀ կառավարության 06.12.2018թ. թիվ 1403-Ն որոշմամբ ավելացվել է 6120.6 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել են 757119.2 հազ. դրամ; 2018 թ դրամարկղային ծախսը կազմել է 757119.2 հազ. դրամ՝ ապահովվելով ծրագրային ցուցանիշի 100%-ը:

2017թ դրամարկղային ծախսերը կազմել են 757475.7 հազ.դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 356.5 հազ.դրամով, պայմանավորված է դպրոցներում ուսուցիչներին տրվող հավելավճարների և լրավճարների գումարների նվազման հետ:

2018թ. - 2488 աշակերտ և 194.7 դասարան,

2017թ. - 2389 աշակերտ 193.8 դասարան,

+99

+0.9

Հանրակրթական ուսուցում ծրագրեր- միջնակարգ ընդհանուր կրթություն

ծրագիր՝ 09-02-02-02

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նշված ծրագրով մարզի հանրակրթական դպրոցներում միջնակարգ ընդհանուր կրթության համար պահպանման ծախսեր են նախատեսվել 242762.2 հազ. դրամ: ՀՀ կառավարության 06.12.2018թ. թիվ 1403-Ն որոշմամբ պակասեցվել 2659.6 հազ.դրամ: Ճշտված պլանը կազմել է 240102.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 240102.6 հազ. դրամ;՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 100%-ը:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել 302290.42 ազ. դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 20.6%-ով կամ 62187.82 հազ.դրամ դրամով, որ պայմանավորված է աշակերտների և դասարանների թվի պակասեցմամբ:

2018թ. – 720 աշակերտ և 82.3

2017թ. - 823 աշակերտ և 90.2 դասարան:

- 103

-7.9

Ներառական կրթություն

2018թ. մարզում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 125 երեխաների համար իրականացվել է ներառական ուսուցում /միջին տարեկան 78246.4 հազ.դրամ ընդամենն ծախսով/: 2017թ. մարզում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 106 երեխաների համար իրականացվել էր ներառական ուսուցում /միջին տարեկան 75312.0 հազ.դրամ ընդամենն ծախսով/: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը աճել են 2934.4 հազար դրամով, որ պայմանավորված է ներառական կրթություն ստացող երեխաների թվի ավելացմամբ՝ 19-աշակերտ:

2018թ. մարզում գործել է 8 ներառական կրթություն իրականացնող դպրոց, 2017թ.-ի 6-ի դիմաց:

***Ներառական կրթություն տարրական ընդհանուր կրթության մակարդակում
ծրագիր՝ 09-01-02-04***

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նշված ծրագրով մարզի հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ստանալու համար նախատեսվել են 32257.6 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 32257.6 հազ. դրամ՝ ապահովվելով 100% կատարողական:

2017 թ դրամարկղային ծախսերը կազմել 34777.8 հազ.դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 2520.2 հազ.դրամով կամ 7.2%-ով, որը պայմանավորված է 2018թ. բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի նվազման հետ:

2018 թվականին տարրական ներառական կրթություն են ստացել փաստացի 50 աշակերտներ, 2017թ. 48-ի դիմաց:

***Ներառական կրթություն հիմնական ընդհանուր կրթության մակարդակում
ծրագիր՝ 09-02-01-04***

2018թ. պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր գումարով 43373.4 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 43373.4 հազ. դրամ, ապահովվելով 100% կատարողական :

2017թ. դրամարկղային ծախսերը կազմել 40054.5 հազ.դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը ավելացել են 3318.9 հազ. դրամով, որը պայմանավորված է աշակերտների թվի ավելացման հետ:

2018 թվականին հիմնական ներառական կրթություն են ստացել 71 աշակերտներ- 2017թ. 55-ի դիմաց:

Ներառական կրթություն միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակում

Ծրագիր՝ 09-02-02-05

ՀՀ 2018թ. պետական բյուջեով նշված ծրագրով մարզի հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ստանալու համար նախատեսվել են 1961.0 հազ. դրամ, ՀՀ կառավարության 06.12.2018թ. թիվ 1403-Ն որոշմամբ ավելացվել է 653.8 հազ.դրամ: Ճշտված պլանը և դրամարկղային ծախսը կազմել 2615.4 հազ. դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

2017թ. դրամարկղային ծախսը կազմել 479.7 հազ. դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը աճել են 5.5 անգամ: 2017թ. բյուջեով ծախսեր նախատեսված է եղել 1 երեխայի հաշվով, հետագա ամիսներին երեխաների միջին թվաքանակի ավելացման հետ /1-ից-3 երեխա / ֆինանսավորման չափը չի փոխվել;

2018թ բյուջեով ծախսեր նախատեսվել է 4 երեխայի հաշվով:

2018 թվականին միջնակարգ ներառական կրթություն է ստացել 4 աշակերտ, նախորդ տարվա 3-ի փոխարեն:

Արտադպրոցական դաստիարակություն

Ծրագիր՝ 09-05-01-02

Նպատակը. սովորողների ազատ ժամանցի կազմակերպումն է, նրանց գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և տեղեկատվական գիտելիքների ձեռքբերմանը նպաստելը, երեխաների մասսայական երաժշտական կրթության կազմակերպումն է: Նրանց համակողմանի մշակութային և հոգևոր զարգացումն է, առավել շնորհալի երեխաների երաժշտական միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստումն է:

Ընթացիկ տարում Եղեգնաձորի <<Երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր են նախատեսվել 49971.2 հազ. դրամ, որը ամբողջությամբ օգտագործվել է:

2017 թ. դրամարկղային ծախսը կազմել է 52834.8 հազ. դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել է 5.4%-ով կամ 2863.6 հազար դրամով, որը պայմանավորված է 2018թ. բյուջեով նախատեսված պահպանման ծախսերով:

Եղեգնաձորի <<Երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ում 2017-18 թթ. կրթություն են ստանում 200 երեխաներ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում

Ծրագիր՝ 09-05-01-05

ՀՀ 2018թ. պետական բյուջեով Վայոց Ձորի մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման կազմակերպման համար մարզի թվով 4 ՀՈԱԿ-ներում և 1 ՊՈԱԿ-ում նախատեսվել է 20303.7 հազ. դրամ ծախսեր, որը ամբողջությամբ օգտագործվել է:

2017 թ. դրամարկղային ծախսը կազմել է 23206.0 հազ. դրամ: 2017 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել է 12.5%-ով կամ 2902.3 հազար դրամով, որը պայմանավորված է մեկ սովորողի ուսման վճարի փոխհատուցման չափի նվազեցումից:

Մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման տարեկան չափը 2018թ դարձել է 19448 դրամ, 2017թ. 22228 դրամի փոխարեն: Ընթացիկ տարում, նախորդ տարվա նման ազգային նվագարանների ուսուցման գծով կրթություն են ստացել 87 երեխաներ:

***Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության շրջանակներում
հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին
տրանսպորտային ծառայությունների մատուցում***

Ծրագիր՝ 09-06-01-11

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման համար նախատեսվել է 18978.9 հազ.դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2018թ. կազմակերպվել է 13 երթուղիներով մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման աշխատանքներ, սպասարկումը փաստացի իրականացվել է ուսումնական տարվա 166 օրը: 2018 թվականին տրանսպորտային ծառայություններից օգտվել են 624 ուսուցիչներ և աշակերտներ, նախորդ տարվա 627 -ի դիմաց:

**Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների
դասագրքերի վարձավճարների փոխհատուցում,**

ծրագիր՝ 09-06-01-25

Ներառական դասարանների սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման համար նախատեսվել է 48.2 հազ.դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.8%-ով 11.9 հազար դրամով, պայմանավորված երախաների թվաքանակով:

Շահառուները մարզի 8 դպրոցների 8 ներառական ուսուցմամբ անապահով երեխաներն են, նախորդ տարվա 6-ի փոխարեն:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարի տրամադրում

Ծրագիր՝ 09-06-01-30

Ծրագրի համար նախատեսվել է 5752.3 հազ.դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: 2018թ. մարզի 16 դպրոցներում աշխատում են որակավորում ստացած 46 մանկավարժներ (2 որակավորում ստացած ուսուցիչ տարվա ընթացքում թոշակավորվել են), նախորդ 48-ի փոխարեն:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում

Ծրագիր՝ 10-09-02-01

2018թ. Վայոց ձորի մարզպետարանին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում ծրագրով հատկացվել էր 88704.0 հազ. դրամ: Հայտավորվել են 1287, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 78184.06 հազ. դրամ:

Ճշտված բյուջեի և դրամարկղային ծախսի շեղումը կազմում է 10519.94 հազ. դրամ, որը պայմանավորված է.

ա/ Կադրերի փոփոխության արդյունքում խնայված գումարների հետ/ նոր կադրերը 6 ամիս չեն օգտվում/

բ/ ուսուցիչների ժամաքանակների նվազման հետևանքով 0.5 դրույքից ցածր աշխատավարձով աշխատող ուսուցիչների թիվն ավելացել է, իսկ վերջիններս սոց. փաթեթի ծառայությունից չեն օգտվում:

գ/ նվազել է դպրոցներում մեկ լրիվ դրույքով աշխատող ուսուցիչների թվաքանակը:

2017թ. ներկայացվել էր 1357 հայտի պահանջ, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել էր 82310.68 հազ. դրամ:

ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդ,

Ծրագիր 11-01-01-01

ՀՀ կառավարության որոշումներով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված 170127.99 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախս է կատարվել 162692.01 հազ. դրամ: 2018թ. իրականացվել է 10 ծրագրեր, նախորդ տարվա 8-ի փոխարեն :

2017թ. դրամարկղային ծախսը կազմել էր 286306.2 հազ. դրամ :

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի միջոցով իրականացվող

եկամուտների հավաքագրում

2018թ. մարզում եկամուտների հավաքագրումը կազմել է 365.58 հազ. դրամ, որից

ա/ Իրավաբանական անձանց կապիտալում կատարվող ներդրումներից ստացվող շահաբաժինների պետական բյուջե փոխանցված գումարն կազմել է 315.58 հազ. դրամ է, նախորդ տարվա 5.48 հազ. դրամի փոխարեն:

2018թ. Եղեգնաձորի ԲԿ-ի պետական բյուջե մուծվող շահաբաժին չունի , Ջերմուկի ԱԿ-ի շահաբաժինը՝ 85.58 հազ. դրամ, Վայքի ԲՄՓԲԸ-ինը 230.0 հազ. դրամ:

բ/ Համայնքի վարչական սահմաններից դուրս պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից ստացված գումարն 50.0 հազ. դրամ է:

2017թ. նույնպես կազմել է 50.0.0 հազ. դրամ: